**Արձանագրություն № 2**
**Երևանի քաղաքապետարանի կարիքների համար ցինկապատ ծալքաթիթեղի ձեռքբերման «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի**

**Протокол № 2**
**Закупка профнастила оцинкованного для нужд мэрии Еревана заседания комиссии по проведению закупок с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47»**

ք. Երևան

03.03.2025թ.
ժամը՝ 10:00
03.03.2025г.
Время՝ 10:00

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Միլետբաշյան |
| Հանձնաժողովի անդամ՝ | Պ. Բոյնիկյան |
| Բացակայում է՝ | Ա. Ավետիսյան |
| Հանձնաժողովի քարտուղար՝ | Լ. Աղաջանյան |

Участвовали

| | |
|---|---|
| Председатель комиссии: | А. Милетбашян |
| Члены комиссии: | П.Бойникян |
| Отсутствует: | А. Аветисян |
| Секретарь комисии: | Л. Агаджанян |

Նիստի անցկացման վայրը՝
Երևանի քաղաքապետարանի վարչական շենք (ք. Երևան, Արգիշտիի փողոց 1), 128 սենյակ
Место проведения заседания.
Административное здание мэрии Еревана (г. Ереван ул. Аргишти 1), комната 128

**1.Տեղեկություններ «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին**
**Сведения об вскрытии заявок в процедуре закупок под кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47»**

---

(Ա. Միլետբաշյան /А. Милетбашян)

1.1 Ընդունել ի գիտություն, որ eauction.armeps.am կայքի միջոցով հրապարակված գնման ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ էր սահմանվել 2025 թվականի փետրվարի 28-ը, ժամը՝ 09:30-ն, իսկ հակադարձ աճուրդը սկսվել է 03.03.2025 թվականին, ժամը՝ 09:30-ին և ավարտվել 03.03.2025 թվականին ժամը 10:00-ին:

1.1 Принять к сведению, что крайний срок подачи заявок на процедуру закупки, опубликованную на сайте eauction.armeps.am, был установлен 28.03.2025 года в 09:30, а обратный аукцион начался 03.03.2025 года в 09:30 и завершился 03.03.2025 года в 10:00.

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2 դեմ - 0:*
*Принято решение: за – 2, против – 0.*

**2. «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47» ծածկագրով գնման ընթացակարգին հայտ և գնային առաջարկ ներկայացրած մասնակիցների մասին**
**Об участниках, подавших заявку и ценовое предложение на процедуру закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47»**

---

(Ա. Միլետբաշյան /А. Милетбашян)

2.1 Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.
2.1 На процедуру закупки подали заявки следующие участники.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը /Имя участника/ | Հասցեն /Адрес/ | Էլեկտրոնային հասցե Электронная почта |
|---|---|---|---|
| 1 | «Նարսան» ՍՊԸ / ООО «Нарсан» | ՀՀ ք. Երևան,Հրանտ Վարդանյան 7 /РА, г. Ереван, Гранта Варданяна 7/ | narsan1@mail.ru |
| 2 | «ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ» ՍՊԸ /ООО "ВИННЕР ГРУП" | Ք. Երևան, Ավան 3-րդ փողոց, 37 տուն /Город Ереван, улица Авана 3-я, дом 37/ | karlen4321@mail.ru |
| 3 | «ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ» ՍՊԸ / ООО «СОПРАНО ГРУПП» | ԿԻԵՎՅԱՆ Փ. / Շ / 8 / 62 ԲՆ. ԱՐԱԲԿԻՐ 0028 /КИЕВСКАЯ УЛИЦА / Ш / 8 / 62 БН. АРАБКИР 0028 | |

2.2 Մասնակցի կողմից ներկայացվել է հետևյալ գնային առաջարկը.
2.2 Следующее ценовое предложение было подано участником.

| Չափաբաժնի համար/ номер лота | Զբաղեցրած տեղ/ Занимаемое место | Ներկայացված հայտեր/ Поданные заявки | Նախահաշվային գին /Ориентировочная цена/ | Վերջին առաջարկ /Окончательная цена/ | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Արժեք/ Стоимость | ԱԱՀ | Գին/ Цена |
| 1 | 1 | «Նարսան» ՍՊԸ / ООО «Нарсан» | 33337500 | 21448000 | 20% | 25737600.00 |
| 1 | 2 | ՎԻՆՆԵՐ ԳՐՈՒՊ ՍՊԸ /ООО "ВИННЕР ГРУП" | 33337500 | 22440000 | 20% | 26928000.00 |
| 1 | 3 | ՍՈՊՐԱՆՈ ԳՐՈՒՊ ՍՊԸ / ООО «СОПРАНО ГРУПП» | 33337500 | 500000000 | 20% | 600000000.00 |

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2 դեմ - 0:*
*Принято решение: за – 2, против – 0.*

### 3. Ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի, սահմանված պահանջներին դրանց համապատասխանության և հայտերի գնահատման մասին

### О наличии документов, представленный участником, занявший 1-е место в процедуре, и их соответствии установленным требованиям, и об оценке заявки

---

(Ա. Միլետբաշյան /А. Милетбашян)

3.1 Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտը արձանագրել է, հետևյալը՝

«Նարսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես. հայտում ներառված լիազորագիրը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց է, ուստի ներկայացված հավելված 1-ը և հավելված 1.3-ը անվավեր են, ինչպես նաև ներկայացված հավելված 1.3-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը հասանելի չէ:

3.1 Оценочная комиссия, изучив заявку участника, занявшего первое место в рамках процедуры закупки с кодом «ԵՔ-ԷԱՃԱՊՁԲ-25/47», зафиксировала следующее:

В заявке, представленной ООО «Нарсан», имеются несоответствия требованиям приглашения, в частности: доверенность, включенная в заявку, на дату подачи

просроченной, поэтому представленные приложения 1 и 1.3 являются недействительными, а также ссылка на веб-страницу, содержащую информацию о конечных бенефициарах в представленном приложении 1.3, недоступна.

3.2 Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի /այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի պահանջները՝ որոշեց ծանուցել մասնակցին հրավերով սահմանված ժամկետում /ծանուցումը ստանալուց մեկ աշխատանքային օրվա ընթացքում /շտկել արձանագրված անհամապատասխանությունները: Անհամապատասխանությունները շտկելու դեպքում ներկայացված հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կգնահատվի անբավարար և կմերժվի՝ համաձայն Կարգի 42-րդ կետի: Անհամապատասխանությունների չշտկումը կդիտվի մասնակցի ստանձնած պարտավորությունների խախտում:

3.2 Исходя из вышеизложенного, оценочная комиссия, основываясь на требованиях пункта 41 Порядка, утвержденного постановлением Правительства РА № 526-n «об организации процесса закупок», решила уведомить участника в срок, установленный приглашением /в течение одного рабочего дня после получения уведомления/ для исправления зарегистрированных несоответствий. В случае устранения несоответствий представленная заявка будет оценена как удовлетворительная, в противном случае будет оценена как неудовлетворительная и отклонена в соответствии с пунктом 42 порядка. нарушение принятых обязательств:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ - 0:*
*Принято решение: за – 2, против – 0*

## 4. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
## Об утверждении дня, времени и места следующего заседания комиссии

(Ս. Մելքոնյան, С. Мелконян)

4.1 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել շտկված փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան, Արգիշտի 1, 128 սենյակ հասցեում:

4.1 Оценочная комиссия решила созвать следующее заседание на следующий рабочий день после получения исправленных документов, в 11:00 по местному времени, по адресу Ереван, Аргишти 1, комната 128:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 2 դեմ - 0:*
*Принято решение: за – 2, против – 0.*

**Հանձնաժողովի նախագահ՝**
Председатель комиссии — Ա. Միլետբաշյան / А. Милетбашян

**Հանձնաժողովի անդամներ՝**
Члены комиссии — Պ. Բոյնիկյան / П. Бойникян

**Քարտուղար՝**
Секретарь комисии — Լ. Աղաջանյան / Л. Агаджанян